

կը գտնուի Ս. Նիկողայոս եկեղեցին՝ հետը ունենալով
Լեհահայոց Նիկոլ եպիսկոպոսը, որ կաթողիկոսին ոտ-
քը եկած էր հնազանդութիւն յայտնելու ու արձա-
կուժ խնդրելու Մովսէս կաթողիկոսի իր վրայ դրած
բանագրանքէն:

Հայրապետը իր Կ. Պոլիս գտնուած միջոցին յա-
տուկ սէր և ընտանութիւն ցոյց կու տայ Մահտեսի
Ամբակումին ու անկէ կը խնդրէ Աստուածաշունչ մը
գրել տալ իրեն համար (Օրագր. էջ 310): Իր հայրա-
կան սիրոյն կ'արժանացնէ մասնաւորապէս ուշիմ և
ուսումնասէր Երեմիա պատանին: Փիլիպպոս կաթողի-
կոսի Քէօմիւրճեան գերդաստանի հանդէպ ունեցած
այդ հայրական վերաբերումին մէկ ապացոյցն է այն՝
որ Երեմիայի փոքր եղբայրը Գէորգ կը հիւանդանայ
ու 1653 Յունուար 14ին, կը գրէ Երեմիա, անոր ջեր-
մեռանդ վաժառքին համաձայն, «տարաք ի յոտս Հո-
գեորտիին, եւ Հոգեորտէրն մի խաչ տուեալ նորա
մասով և աւրհնեաց զնա» (Օրագր. էջ 35):

Հայրապետը իր Կ. Պոլսէն մեկնելէն օր մը առաջ,
այսինքն 1653 Ապրիլ 26ին, հրաժեշտի քարոզը կը
խօսի Ս. Նիկողայոս եկեղեցին, կը խրատէ ու կ'օրհնէ
ժողովուրդը, կը ծանուցանէ թէ Յովհաննէս Մուղնե-
ցին մէկ տարուան համար առաջնորդ կարգած է մայ-
րաքաղաքին, իսկ այնուհետև զով որ խնդրեն՝ զայն
պիտի ուղարկէ. նաև կը ծանուցանէ՝ թէ Երեմիայի
հայրը Տէր Մարտիրոս կարգած է «վէքիլ եւ աւագե-
րէց Ս. Էջմիածնայ», որպէսզի հսկէ Մայր Աթոռի գան-
ձանակին վրայ ու արդիւնքը իրեն հասցնէ: Պաշտա-
մունքի աւարտէն վերջ Ս. Աստուածածնի, Ս. Նիկո-
ղայոսի և Ս. Սարգսի աւագերէցները՝ Տէր Ռհան, Տէր
Աւետիս և Տէր Մարտիրոս (Քէօմիւրճեան), նաև Տէր
Ռսկան ու Երեմիայի վարժապետը Տէր Յովհաննէս և
ինք Երեմիա կը ներկայանան Հայրապետին, որ քա-